ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը «Նախագծերի կառավարում» մագիստրոսական ծրագրի մեկնարկին

Հարգարժան պարոն նախարար,

Հարգելի գործընկերներ, հյուրեր, ուսանողներ

Ողջունում և շնորհավորում եմ բոլորիս «Նախագծերի կառավարում» համատեղ մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկի առթիվ, ինչը որքան պատվաբեր նախագիծ է, նույնքան էլ պարտավորեցնող է:

Հատուկ շնորհակալություն եմ հայտնում Կրթության և գիտության նախարարությանը, անձամբ նախարար պարոն Մկրտչյանին՝ ծրագրի իրագործմանն աջակցելու համար: Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև մեր երկու՝ Հայաստանի պետական տնտեսագիտական ու Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանների, ինչպես նաև Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի ղեկավարությանը, բոլոր աշխատակիցներին, որոնք նպաստեցին համատեղ ծրագիրը կյանքի կոչելուն:

Այս մագիստրոսական կրթական ծրագրի իրականացումը կարևոր նախաձեռնություն է, որը նախևառաջ ուղղված է բարձրագույն կրթության համակարգի մարտահրավերների հաղթահարմանը և կրթության միջազգային զարգացումներին համաքայլ ընթանալուն: Այն միտված է բարձրացնելու մագիստրոսական կրթության որակը, ուսանողներին լավագույնս

նախապատրաստելու աշխատաշուկայի պահանջներին՝ զինելով նրանց կիրառական գիտելիքներով: Օգտագործելով մեր երկու բուհերի և Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանի ուժեղ կողմերը, գիտակրթական ներուժը՝ համատեղ կրթական ծրագիրը կնպաստի նաև դասավանդման որակի և մեթոդների բարելավմանը, ուսումնական գործընթացի կառավարման նոր ձևերի փորձարկմանը և ներդրմանը: Կցանկանայի նշել նաև, որ համատեղ կրթական ծրագիրն ունի մի շարք մրցակցային առավելություններ:

Այսօր, ստորագրելով համատեղ կրթական ծրագրի մասին համաձայնագիրը, մենք սկիզբ ենք դնում մի նոր ու Հայաստանում նախադեպը չունեցող գործընթացի, երբ Հայաստանի երկու և Եվրոպական Միության մեկ համալսարան միավորվելով իրականացնելու են կրթական ծրագիր՝ փոխճանաչելով միմյանց մագիստրոսական ուսումնական գործընթացները և որակավորումները:

Հաշվի առնելով համատեղ ծրագրի միջոլորտային և միջազգային բնույթը, ինչպես նաև փոխճանաչման խնդիրները՝ ծրագիրը կկառավարվի գործընկեր համալսարանների որակի ապահովման ստորաբաժանումների կողմից:

Ցանկանում եմ հաջողություն մաղթել մեր նոր նախաձեռնությանը, մեր համալսարանների վարչական, ուսումնական և դասախոսական անձնակազմերին, ինչպես նաև ուսանողներին:

Բարի երթ բոլորիս: